«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿՆԳՆՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 3

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ / ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՄԱՍ / ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ / ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2024 թ.

Քաղվածք

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2022 թ. հոկտեմբերի 13-ին ժամը 14.00-ին կայացած 8-րդ նիստի արձանագրության

Նիստի նախագահ՝ Ա. Քոչարյան

Քարտուղար՝ Լ. Իգիթյան

Մասնակցում էին՝ Հ. Վանյան, Հ. Հովսեփյան, Կ. Այվազյան, Մ.Մինասյան, Ա. Գրիգորյան, Ա. Բաղիշյան, Ա. Մանասյան, Գ. Գյուրջյան, Ա. Ղուլյան, Ա. Վարդանյան, Վ. Իսահակյան

Հրավիրված էին՝ Գ. Կնյազյան, Ս. Մելիք-Քարամյան, Ա. Էլոյան, Ա. Սամուելյան, Ա. Եղիազարյան, Գ. Համազասպյան, Է. Հարությունյան, Կ. Վասիլյան, Լ. Վասիլյան, Կ. Կարագյոզյան, Կ. Ամպարջյան

ՕՐԱԿԱՐԳ

4. Շիրակի մարզի Աշոցքի շրջանի Կրասար բնակավայրի կամրջի վերականգնման էսքիզային նախագծի քննարկում:

Զեկ.՝ Լ. Վասիլյան
Փորձ.՝ Ա. Ղուլյան

ԼՍԵՑԻՆ՝ *Կ. Վասիլյանը ներկայացրեց հարցը* – Կրասարի կամուրջը (պետ. ցուցիչ՝ 7.58.5) գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, Աշոցքի տարածաշրջանում, Ախուրյան գետի վտակներից մեկի վրա: Այն հանդիսանում է Կրասար և մեծ ու փոքր Սեպասար բնակավարերի հիմնական կապող ուղին: Ըստ Ղևոնդ Ալիշանի «Շիրակ» գրքի հիշատակումների՝ Կրասարի կամուրջը կառուցվել է 1873 թվականին «Կիւմրեցի» Ստեփանոս Անանիկյանցի հովանավորությամբ:

«Շնորհօքն ամենազօրին Աստուծոյ շինեցաւ կամուրջս յինքնակալութեան Աղեքսանդր Երկրորդի օգոստափառ կայսր Ռուսաց, արդեամբ և ծախիւք Ստեփաննոսի Անանիկեանց, ի հիշատակ հոգւոյ փրկութեան իւրոյ կենակցին Գայանեայ, եղբօրն Կարապետի եւ կենակցին Հռիփսիմեայ եւ ծնողաց նոցին. եւս առաւել վերակացուին շինութեանս Գրիգորի Ռափայէլեանց»:

Կամրջի կոնստրուկտիվ համակարգը լուծված է գետահունի մեջ գտնվող երկու խելերի և առափնյա կիսախելերի վրա հենված երեք հավասարաթռիչք թաղակամարներից ու դրանց հետ համատեղ, մեկ ամբողջություն կազմող եզրային բազրիքավոր պատերից և ճանապարհապաստառից, կառուցված է սև և կարմիր սրբատաշ տուֆից: Դրա թռիչքները 8.5 x 8 մետր են, հենասյուները՝ 3 x 14 և բանող մասը՝ 7,5 x 64: Այս կամուրջն իր ճարտարապետական կառուցվածքով շատ նման է Կարս քաղաքի կամրջին:

Պատերն ու խելերը հենված և ագուցված են ռելիեֆի թեքություններով մաքրված հիմնատակի ժայռային բնահողին, որոնք իրականացված են հիմնականում սև, մասամբ նաև դարչնակարմրագույն երանգների, կանոնավոր ձևերով մշակված, դարաղատաշ երեսվածքով խոշորաչափ տուֆաքարերից, իսկ թաղակամարների եզրաշարերը սրբատաշ են:

Կամրջի ձախափնյա խուլ զանգվածը թեթևացվել է դրանում ներկառուցված ներքնասենյակով, որը նույնպես թաղածածկ է և ունի 1 մուտք ու 1 պատուհան:

Կամրջի խելերը, թաղակամարները և պատերը շարված են կրաավազային կապակցաշաղախով, իսկ դրանց զանգվածային միջալիցքերն իրականացված են խամքարերից, տուֆախիբարներից ու կրաավազի մանրախճային կապակցաշաղախից:

Խորհրդային տարիներին կամրջի վրայով բավականին մեծ չափերի խողովակ են անցկացրել, որը շահագործվել է մինչև 1970-ական թվականները, որի պատճառով փլուզվել են կամրջի արևմտյան կողմի 1-ին և 2-րդ թռիչքների միջև գտնվող պատերը: Կամրջի կամարների վրա նկատելի են ճաքեր, տեղաշարժված և փլված քարեր: Կատարվել է կամրջի և խցի չափագրություն, օգտագործվել են ձողեր, լազերային չափող գործիք, լազերային հարթաչափ: Հարաբերական 0,000 նիշը համապատասխանում է բացարձակ 1980,2 նիշին: Կատարվել է նաև տեղանքի գեոդեզիական հանույթ և երկրաբանական հետազոտություն: Չափագրության արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ բեկորներ, որոնք կոգտագործվեն հետագա վերականգնման ընթացքում:

Առաջարկվում է միջամտություններն անել երկաթբետոնե ցցասյուներով և քողարկված երկաթբետոնե սալով, որի վրա, ըստ առաջարկի, կքննարկենք կանոնավոր հաստ սալվածք, որովհետև նախատեսվում է գյուղատնտեսական տեխնիկայի և տրանսպորտի հոսք: Ժամանակին արվել են բետոնացման միջամտություններ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝

Ա. Քոչարյան - Հնարավո՞ր է դա ռեստավրացիա անել:

Կ. Վասիլյան - Նախագծով նախատեսվում է բետոնային միջամտությունները հանել և իրականացնել բնօրինակին համապատասխան: Այստեղ երկու հարց կա՝

1. Խելերը, կարծում ենք, որ հարկավոր է իրականացնել բազալտե նոր տաշ ու շարով:

2. Սալվածքը պետք է արվի բազալտե կամ տուֆե սալվածքով, քարերն՝ ավելի հաստ, որպեսզի շուտ շարքից դուրս չգան: Կամուրջը համայնավարության տարիներին, բացի ճանապարհից, օգտագործվել է նաև որպես հենարանային կոնստրուկցիա, որի վրայով անցկացվել են մեծ տրամաչափի չուգունե խողովակներից զույգ ջրագծեր և խողովակները ծածկելու համար կամրջի ճանապարհապաստառի վրա հավելվել է տարբեր կազմի բնահողերից (ավազ, կավաավազ, խճաքարեր և այլն) լիցքաշերտեր ու դրանց վրա տեղադրվել է ասֆալտբետոնի երեսապաստառ, որը գրեթե ամբողջությամբ ծածկել է կամրջի բազրիքապատերը և հավելաբեռնել կամուրջը, արդյունքում նիշը բարձրացվել է և եզրակացության հիման վրա այն կհանվի:

Ա. Բաղդիշյան - Ճանապարհը սկզբից սալվածք ունեցե՞լ է:

Կ. Վասիլյան - Այս պահի դրությամբ ասֆալտի շերտ է, չի պահպանվել: Նախատեսում ենք կամրջի վրայից հեռացնել ճանապարհապաստառի բնահողից շերտերը և մնացած խողովակները՝ հասնելով միջալցքի կրողունակ շերտին, կամրջի վրայով երթևեկող տրանսպորտային միջոցների ազդեցությունը մեղմելու նպատակով, առաջարկվում է դիտարկել կամրջի հոծ զանգվածային մասերում, ափամերձ հատվածներում և խելերում հորատել համապատասխան տրամաչափի անցքեր՝ հասնելով հիմնատակի ժայռային գրունտներին, այնուհետև հորատված անցքերում տեղադրել պողպատե գլածո բետոնալցված խողովակներից կամ միաձույլ ե/բ-ից պատրաստված ցցասյուներ, որոնց վրա հենելով ու հուսալի խարսխակապելով լուծել վերն առաջարկված կրաբետոնե կամ միաձույլ ե/բ թաքնված սալը:

Ա. Մանասյան - Մինչև ու՞ր:

Կ. Վասիլյան - Մինչև հասնի բազալտի շերտին, երկրաբանական եզրակացության հիման վրա այնտեղ լավ գրունտներ են՝ հիմնականում բազալտի մեծ կտորներ: Ցցերի վրա էլ սալն է նստելու, որի տակ համահարթեցնող շերտ է լինում և սալի վրա մյուս շերտերը,քանի որ կամուրջն իր գոյության ընթացքում, ենթարկվելով բնակլիմայական և տեխնածին տարբեր ազդեցությունների, ձեռք է բերել տարաբնույթ վնասվածքներ: Կամրջի հարավ-արևելյան պատը թաղակամարների հետ միասին ներկայումս փլուզվել է, իսկ չուգունե խողովակները մասամբ թափվել են ջրի մեջ: Ըստ ամենայնի՝ փլուզման հնարավոր պատճառ է հանդիսացել խողովակների միացման հանգույցներից ջրերի արտահոսքը, որը ողողել է ճանապարհապաստառի լիցքաշերտերը և կամրջի կոնստրուկցիաները, որոնք ենթարկվել են պարբերական թրջման ու սառնաքայքայման, ինչի արդյունքում, ինչպես նաև տրանսպորտային միջոցների ազդեցությունից, կամուրջն աստիճանաբար թուլացել և ենթարկվել է փլուզման: Այժմ խողովակաշարերը կամրջի աջափնյա եզրում փակված են և տեղադրված է շրջանցիկ նոր խողովակաշար: Բացի փլուզումներից, վերը նշված ազդեցությունների հետևանքով թաղակամարներում առաջացել են քարերի շարակարաններով զարգացած, մինչև 50մմ բացվածքի տարանջատումային ճաքեր, առաջարվում է թաղաշարերում և պատերում առկա բոլոր ճաքերն ու խոռոչավորված տեղամասերը նախապես լվանալ ջրաշիթով, կարանախցել և ներարկել կրացեմենտային բարդ շաղախով:

Ա. Մանասյան - Ճաքերը նստվածքայի՞ն են, թե՞ դեֆորմացիոն:

Կ. Վասիլյան - Ավելի շատ փլվելու արդյունքում առաջացած ճաքեր են, լուսանկարներում երևում են: Թաղակամարների և պատերի ստորին մասերում՝ առավելապես խելերի հենամասերում, տեղի են ունեցել քարերի տրորման, շերտապոկման և տարանջատման երևույթներ: Պատերի վերին մասերում ևս կան շերտավորված, փքված, մասամբ փլուզված և փլուզման ենթակա վթարավտանգ տեղամասեր:

Ա. Մանասյան - Հիմնատակն ի՞նչ է:

Հ. Վանյան - Երկրաբանություն արե՞լ եք:

Կ. Վասիլյան – Այո՛, հիմնատակը բազալտ է:

Հ. Վանյան - Նյութագիտություն արե՞լ եք, ի՞նչ քարատեսակ ենք առաջարկելու, ի՞նչ հանքի:

Կ. Վասիլյան - Քանի որ այն սև և դարչնագույն տուֆ է, նույն գունային երանգների մեջ է նախատեսվում՝ մաքսիմալ պահելով նախնական տեսքը, կոնկրետ հանքը նշված չի: Կարմիր տուֆ շատ քիչ տեղերում է օգտագործված՝ կետային:

Ա. Բաղիշյան - Շիրակի տարածքից հնարավոր է:

Կ. Վասիլյան - Մի հարց կա խելերի հետ կապված. կամրջի տարբեր տեղամասերում՝ միջին և առափնյա խելերի հիմնամասերում, ինչպես նաև թաղակամարներում առկա են միաձույլ բետոնից ու խամքարաբետոնից ամրակայումներ, որոնք մեծ մասամբ գտնվում են քայքայված և պատերից առանձնացված վիճակում և որպես այդպիսիք չեն կարող հանդիսանալ ամրակայող տարրեր, նախատեսվում է հանվի և բազալտից իրականացվի:

Ա. Բաղիշյան - Կամարների հատման մասում խելի հաստությունն ինչքա՞ն է, ցցերը իրականացնելու տեխնոլոգիայի հետ է կապված հարցը, կարող է ուրիշ տարբերակ առաջարկվի՝ երկաթբետոնե պլիտայից կախվող կոնստրուկցիա իրականացվի, որ չճկվի և խելի մեջ չմտնի:

Կ. Վասիլյան - Կոնստրուկտորի հետ հարցը քննարկվել է՝ 1,90 մ է խելը և 30 սմ տրամագծով ցցեր են լինելու և «նաբիվնոյ» սիստեմով չի արվելու:

Ա. Բաղիշյան - Կոպիտ ֆեռմայի ձև արվի, խելերի մեջ չմտնենք:

Հ. Վանյան - Եզրակացություն ունե՞նք, որ հնարավոր է մտնել խելերի մեջ: Սա ասում եմ, որովհետև առաջադրանքով տվել ենք, որ հաշվի առնեն, որ կամուրջն օգտագործվելու է գյուղատնտեսական ծանր տեխնիկայի համար:

Կ. Վասիլյան - Ձեր ասած կոնստրուկցիան չի աշխատի, քանի որ, որտեղ որ կանգնելու է, այդ մասը խարխուլ է:

Ա. Վարդանյան - Ափից ափ կամուրջ է դառնալու:

Հ. Վանյան - Այդ տարբերակն էլ քննարկեք կոնստրուկտորների հետ: Իսկ կապակցող նյութն էլի կիր է լինելու՞:

Կ. Վասիլյան - Վերականգնման համար, պատառոմածքներում և միջալցքերում կիրառել հիդրավլիկ կրից, ցեմենտից և սիլիկատային ավազից բարդ կապակցաշաղախ՝ դրան հավելելով մանրացված բազալտաթելեր և կպչունակություն ու ծավալային ջրաանթափանցելիություն ապահովող բաղադրանյութեր:

Ա. Մանասյան - Արժե երկու թաղերի արանքը բացել, տեսնել՝ ի՞նչ պատկեր է:

Ա. Բաղիշյան - Ընկած քիվերը լրիվ ջարդվե՞լ են:

Հ. Վանյան - Ջրահեռացման համար ի՞նչ է արվել:

Ս. Մելիք-Քարամյան - Բնական թեքություններ:

Ա. Բաղիշյան - Տուֆով չերեսպատե՞նք:

Ա. Վարդանյան - Գրանիտ:

Կ. Այվազյան - Ճիշտ է ասում, գրանիտը գուցե ավելի ճիշտ է:

Փորձագետ - Շատ լավ տպավորություն թողեց նախագիծը, շատ լավ խնդիրներին տեղյակ, ճակատները վերականգնում են, մաքրվում է: կոնստրուկտիվ հարցի...

Ա. Վարդանյան - Կոնստրուկտիվ մասը պետք է կոնսիլյում արվի, որ տարբեր առաջարկներ լինեն:

Հ. Վանյան - Կոնստրուկտորական մասը, երբ որ մի լուծման գա, մենք մի քանի կոնստրուկտորների կհավաքենք և կքննարկենք: Տեխնիկական առաջադրանքի բնութագրի մեջ պայման էինք դրել՝ ներառել մակերևութային ջրերի հեռացման, կամրջի ներքին սենյակի դռան տեղադրման, խողովակների հեռացման, լիցքի թեթևացման և կամրջի քարե ծածկույթի վերականգնման առաջարկներ:

Կ. Վասիլյան - Խողովակը հանվում է, լիցքը թեթևացվում, սենյակի համար նախատեսվել է դուռ, պատուհան, ջրահեռացումն արված է:

Հ. Հովսեփյան- Բազալտե առվակներ է արված:

Ա. Մանսայան - Նոր քարերին ուշադրություն դարձրեք, թող տարբերվի, բայց աչքի համար հաճելի տարբերվի:

Հ. Հովսեփյան - Բայց ինչու՞ տարբերվի:

Հ. Վանյան - Հնարավորինս չտարբերվի:

Ա. Մանսայան - Հատակը, եթե մեքենա է անցնելու, կամ պետք է ասֆալտ արվի, կամ «բռուշատկա», որ դիմանա:

Հ. Վանյան - Ասֆալտ չէ:

Ս. Մելիք-Քարամյան - Ծայրահեղ դեպքում բազալտ:

ՈՐՈՇՎԵՑ՝ Շիրակի մարզի Աշոցքի շրջանի Կրասար բնակավայրի կամրջի վերականգնման էսքիզային նախագիծը համարել ընդունելի, ճանապարհային պաստառն իրականացնել բազալտե կամ գրանիտե չորսվակասալերից, վերականգնվող հատվածներում քարի արտաքին մշակումը համապատասխանեցնել գոյություն ունեցողին՝ որոշակի ֆակտուրայով:

Խորհրդի նախագահ՝ **Ա. ՔՈՉԱՐՅԱՆ**

Քարտուղար՝ **Լ. ԻԳԻԹՅԱՆ**

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԱՍԱՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿՆԳՆՄԱՆ
ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

ԳԻՐՔ 1 - ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ 2 - ԷՍՔԻԶ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 3 - ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ / ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ, ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ/

ԳԻՐՔ 4 - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԵՐԵՎԱՆ 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Կրասարի կամուրջը (պետ. ցուցիչ՝ 7.58.5) գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Աշոցքի տարածաշրջանում, Ախուրյան գետի վտակներից մեկի վրա: Այն հանդիսանում է Կրասար և հին ու նոր Սեպասար բնակավարերի հիմնական կապող ճանապարհը: Ըստ Ղևոնդ Ալիշանի «Շիրակ» գրքի հիշատակումների Կրասարի կամուրջը կառուցվել է 1873 թվականին «Կիւմրեցի» Ստեփանոս Անանիկյանցի հովանավորությամբ:

Կամրջի վերականգնման նախագծի կատարման համար հիմք է հանդիսացել պատվիրատուի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության, առաջադրանքը:

Կատարվել են երկրաբանական և սեյսմիկ ուսումնասիրություններ:

Ներկայումս կամուրջը գտնվում է անմխիթար վիճակում, որոշ հատվածներում առկա են աղային հետքեր, բուսականություն:

Նկատելի են նաև ամրակայման նպատակներով ոչ մասնագիտական միջոցառումներ, որոնք առանձնապես երևում են խելերի և հյուսիս-արևելյան ճակատի վրա բետոնացված մասերով:

Նախագծով նախատեսվում է վերականգնել կամրջի նախկին տեսքը պահպանելով ծավալատարածական լուծումները:

Ամբողջությամբ քանդել բետոնացված հատվածները և վերականգնել սև և կարմիր տուֆի շարվածքով:

Վերականգնման ընթացքում հնարավորինս օգտագործել հայտնբերված բեկորները:

Անհրաժեշտ է նաև մաքրել առկա բուսականությունը և աղային գոյացությունը, իսկ հետագայում միջոցառումներ ձեռնարկել դրանց դեմ:

ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

1	Գլխաթերթ	0-1
2	Նախագծի կազմը	0-2
3	Տիտղոսաթերթ	0-3
4	Գծագրերի ցանկ, Բացատրագիր	ՃԾ-1
5	Իրավիճակային հատակագիծ Մ 1:2000	ՃԾ-2
6	Գլխավոր հատակագիծ Մ 1:200	ՃԾ-3
7	Հատակագիծ ըստ 0.000 նիշի	ՃԾ-4
8	Հատակագիծ ըստ 4.585 և 4.790 նիշի	ՃԾ-5
9	Հյուսիս-Արևելյան ճակատ	ՃԾ-6
10	Հարավ-Արևմտյան ճակատ	ՃԾ-7
11	Կտրվածքներ 1-1, 2-2, Հանգույց 1	ՃԾ-8
12	Կտրվածքներ 3-3, 4-4	ՃԾ-9
13	Կտրվածքներ 5-5, 6-6	ՃԾ-10
14	Կտրվածք 7-7	ՃԾ-11
15	Սենյակի հատակագիծ, Կտրվածքներ 8-8, 9-9, 10-10,11-11	ՃԾ-12



ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃՇ	ՃՇ-2	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՃԲԴ-Գ-020		
			Իրավիճակային հատակագիծ Մ 1:2000			

VASART
Architecture & Design



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃՇ	ՃՇ-3	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ		
			Գլխավոր հատակագիծ Մ 1:500	ՃԲԴ-Գ-020		

VASART
Architecture & Design



ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ 0,000 ՆԻՇԻ Մ 1:100

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դպրի կամրջի վերակառուցման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի քանակ	VASART
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՏՇ	ՏՇ-4	15	
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՇԲԴ-Գ-020			
			Հատակագիծ ըստ 0,000 նիշի				



Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շաղ
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շաղ ինի հեռացմամբ
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշաղ
- Բազալտի նոր տաշ ու շաղ բետոնի հեռացմամբ

ՀԱՏԱԿԱԳԻԾ ԸՍՏ 4,585 և 4,790 ՆԻՇԻ Մ 1:100

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՏՀ	ՏՀ-5	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՃԲԴ-Գ-020		
			Հատակագիծ ըստ 4,585 և 4,790 նիշի			

VASART



ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏ Մ 1:100

Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շար
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շար հնի հեռացմամաբ
- Տուֆե նոր տաշ ու շար բետոնի քանդումով
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշար
- Բազալտի նոր տաշ ու շար բետոնի հեռացմամբ

Ծանոթություն: Բեկորները կլրացվեն ավելորդ հողի հեռացումից հետո:

Վերականգնվող երեսապատի քարերը մշակել ձեռքի գործիքներով՝ համանման գոյություն ունեցող հատվածներին

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃԾ	ՃՇ-6	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՃԲԴ-Գ-020		
			Հյուսիս-Արեվելյան Ճակատ Մ 1:100			

VASART



ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ Մ 1:100

Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շար
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շար ինի հեռացմամբ
- Տուֆե նոր տաշ ու շար բետոնի քանդումով
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշար
- Բազալտի նոր տաշ ու շար բետոնի հեռացմամբ

Ծանոթություն: Բեկորները կլրացվեն ավելորդ հողի հեռացումից հետո:

Վերականգնվող երեսապատի քարերը մշակել ձեռքի գործիքներով՝ համանման գոյություն ունեցող հատվածներին

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃԾ	ՃԾ-7	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՃԲԴ-Գ-020		
			Հարավ-Արևմտյան Ճակատ Մ 1:100			

VASART





Հանգույց 1

ԿՏՐՎԱԾՔ 1-1
Մ 1:100

ԿՏՐՎԱԾՔ 2-2
Մ 1:100



Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շար
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շար հնի հեռացմամբ
- Տուֆե նոր տաշ ու շար բետոնի քանդումով
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշար
- Բազալտի նոր տաշ ու շար բետոնի հեռացմամբ

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃՇ	ՃՇ-8	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՃԲԴ-Գ-020		
			Կտրվածքներ 1-1, 2-2, Հանգույց 1			

VASART
Architecture & Design



ԿՏՐՎԱԾՔ 3-3
Մ 1:100

ԿՏՐՎԱԾՔ 4-4
Մ 1:100

Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շար
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շար հնի հեռացմամբ
- Տուֆե նոր տաշ ու շար բետոնի քանդումով
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշար
- Բազալտի նոր տաշ ու շար բետոնի հեռացմամբ

Վերականգնվող երեսապատի քարերը մշակել ձեռքի գործիքներով՝ համանման գոյություն ունեցող հատվածներին

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր	VASART Architecture & Design
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃՇ	ՃՇ-9	15	
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ			
			Կտրվածքներ 3-3, 4-4	ՃԲԴ-Գ-020			



ԿՏՐՎԱԾՔ 5-5
Մ 1:100



ԿՏՐՎԱԾՔ 6-6
Մ 1:100

Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շար
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շար հնի հեռացմամաբ
- Տուֆե նոր տաշ ու շար բետոնի քանդումով
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշար
- Բազալտի նոր տաշ ու շար բետոնի հեռացմամբ

Վերականգնվող երեսապատի քարերը մշակել ձեռքի գործիքներով՝ համանման գոյություն ունեցող հատվածներին

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի	VASART Architecture & Design
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃՇ	ՃՇ-10	15	
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ			
			Կտրվածքներ 5-5, 6-6	ՃԲԴ-Գ-020			



ԿՏՐՎԱԾՔ 7-7 Մ 1:100

Պայմանական նշաններ

- Նոր տաշ ու շար
- Պահպանվող հատված
- Նոր տաշ ու շար ինի հեռացմամաբ
- Տուֆե նոր տաշ ու շար բետոնի քանդումով
- Հեռացվող հողի ծավալ
- Քանդում վերաշար
- Բազալտի նոր տաշ ու շար բետոնի հեռացմամբ

Վերականգնվող երեսապատի քարերը մշակել ձեռքի գործիքներով՝ համանման գոյություն ունեցող հատվածներին

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի	VASART
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃԾ	ՃՇ-11	15	
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ ՃԲԴ-Գ-020			
			Կտրվածք 7-7 Մ 1:100				

ՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԻԾ



ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ 1:100



ԿՏՐՎԱԾՔ 11-11
Մ 1:100



ԿՏՐՎԱԾՔ 10-10
Մ 1:100



ԿՏՐՎԱԾՔ 9-9
Մ 1:100

ԿՏՐՎԱԾՔ 8-8
Մ 1:100

Փայտյա դուռ
Մ 1:50



Փայտյա պատուհան
Մ 1:50



Պայմանական նշաններ

Կարանախցում

Նոր տաշ ու շար

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր
Ճարտ.	Կ. Վասիլյան			ՃՇ	ՃՇ-12	15
Ճարտ.	Լ. Վասիլյան		Ճարտարապետա-շինարարական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ		
			Սենյակի հատակագիծ, Կտրվածքներ 8-8, 9-9, 10-10,11-11	ՃԲԴ-Գ-020		

VASART
Architecture & Design

Շին. աշխատանքների ծավալների ամփոփագիր

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	քանակը
	Քանդման աշխատանքներ		
1	Գոյություն ունեցող ասֆալտի շերտի քանդում	խմ	90,00
2	Ճանապարհապաստառի տակ բնահողի հեռացում	խմ	500,00
3	Բետոնացված հատվածների քանդում	խմ	30,00
4	70սմ տրամագծով խողովակի ապամոնտաժում	գծմ	40,00
5	Վնասված հատվածների քարերի քանդում (տուֆ)	քմ	65,00
6	Տեղադրված քարերի քանդում վերաշարի նպատակով	քմ	25,00
7	Շին աղբի բարձում և հեռացում 13 կմ	տ	2156,00
	Հողային աշխատանքներ		
1	Ավելորդ հողի հեռացում տեխնիկայով	խմ	280,00
2	Կամրջի աղակալած և աղտոտված հատվածների մաքրում մոտ 80 %-ով	քմ	800,00
	Ճարտարապետական մաս		
1	Կամարների եզրաքարերի նոր տաշ ու շար (տուֆ) ձեռքով/ 80գծմ	քմ	48,00
2	նոր տաշ ու շար (տուֆ) ձեռքով / Միդիս	քմ	220,00
3	Հիմնատների նոր տաշ ու շար բազալտե քարերով	քմ	70,00
4	Պարապետի գլխաքարերի նոր տաշ ու շար	քմ	13,50
5	Քիվերի նոր տաշ ու շար գեղարվեստական ոճի	խմ	3,24
6	ճաքերի ներարկում	մ	50,00
7	Կարանախցում	մ	60,00
8	Շլակով հետլիցք	խմ	200,00
9	Նախապատրաստական շերտի իրականացում խճից бегон	խմ	35,00
10	Նախապատրաստական շերտի իրականացում բետոնից Բ15 դաս бетон	խմ	35,00
11	Բազալտե սալվածքի իրականացում	քմ	450,00
12	Տուֆե սալվածքի իրականացում	քմ	22,00
13	Ձրամեկուսիչ շերտի իրականացում տոլից	քմ	450,00

14	Ջրահեռացման ակվեդուկներ բազալտից	գծմ	100,00
15	Փայտյա դռան տեղադրում	քմ	2,09
16	Փայտյա պատուհանի տեղադրում	քմ	1,80
	Կոնստրուկտորական մաս		
1	Ե/բ ափային հենարանի կառուցում Բ25 դասի բետոնից 2 հատ	խմ	104,00
2	Ամրան փ 16 A500c	կգ	1104,00
3	Ամրան փ 12 A500c	կգ	1688,00
4	Ամրան փ 8 Ac-I	կգ	194,40
5	Ե/Բ ափային հենարանի պարզունակի կառուցում Բ25 դասի բետոնից	խմ	18,00
6	Ամրան փ 20 A500c	կգ	656,00
7	Ամրան փ 8 Ac-I	կգ	285,20
8	Ամրան փ 12 A500c	կգ	729,00
9	Ե/Բ անցումային սալի կառուցում Բ25 դասի բետոնից 2 հատ	խմ	0,24
10	Ամրան փ 20 A500c	կգ	1234,00
11	Ամրան փ 8 Ac-I	կգ	54,60
12	Ամրան փ 12 A500c	կգ	1345,44
13	Ե/Բ խելի ամրացում Բ25 դասի բետոնից 2 հատ	խմ	49,00
14	Ամրան փ 16 A500c	կգ	2898,00
15	Ամրան փ 8 Ac-I	կգ	118,00
16	Ամրան փ 12 A500c	կգ	2996,80
17	Ե/բ Թաղի կառուցում Բ 25 դասի բետոնից -1 հատ	խմ	25,00
18	Ամրան փ 12 A500c	կգ	5901,00
19	Ամրան փ 8 Ac-I	կգ	11,50
20	Ե/բ պատի կառուցում Բ 25 դասի բետոնից -1 հատ	խմ	49,50
21	Ամրան փ 12 A500c	կգ	9095,00
22	Ամրան փ 8 Ac-I	կգ	69,30
23	Թաղի փայտամածի իրականացում/տախտակ 150*3	խմ	5,00
24	Մետաղական ֆերմայի մոնտաժում	տ	1,05
25	խողովակ 60*60*3,5	կգ	75,50
26	խողովակ 80*60*4	կգ	74,24
27	խողովակ 40*40*3	կգ	829,98

28	թիթեղ 10մմ-ոց	կգ	11,80
29	թիթեղ 8մմ-ոց	կգ	61,20
30	Ե/Բ հենարանային պարզունակի կառուցում Բ25 դասի բետոնից	խմ	12,40
31	Ամրան փ 16 A500c	կգ	162,40
32	Ամրան փ 25 A500c	կգ	3184,00
33	Ամրան փ 8 Ac-I	կգ	940,76
34	Ե/բ ֆերմատակ սալի կառուցում Բ25 դասի բետոնից 2 հատ	խմ	14,80
35	Ամրան փ 16 A500c	կգ	216,00
36	Ամրան փ 8 Ac-I	կգ	108,60
37	Ե/բ հենարանային հիմքի կառուցում Բ25 դասի բետոնից 2 հատ	խմ	2,08
38	Ամրան փ 20 A500c	կգ	744,00
39	Ե/բ հենարանային սալի կառուցում Բ25 դասի բետոնից 4 հատ	խմ	2,08
40	Ամրան փ 28 A500c	կգ	3716,00
41	Ամրան փ 18 A500c	կգ	404,00
42	Ամրան փ 8 Ac-I	կգ	992,80
37	Ե/բ հենարանային հիմքի կառուցում Բ25 դասի բետոնից 2 հատ	խմ	40,00
44	Ամրան փ 16 A500c	կգ	1688,00
45	Ամրան փ 8 Ac-I	կգ	9,84
46	Ամրան փ 12 A500c	կգ	114,40
47	Ե/Բ ափային հենարանի ուղահայաց պատի իրանի կառուցում Բ 25 դասի բետոնից	խմ	25,00
48	Ամրան փ 12 A500c	կգ	697,58
49	Ամրան փ 8 Ac-I	կգ	20,10
50	Ամրան փ 20 A500c	կգ	3,29
51	Միաձույլ Ե/Բ անցումային սալի կառուցում Բ25 դասի բետոնից	խմ	18,90
52	Ամրան փ 18 A500c	կգ	323,08
53	Ամրան փ 12 A500c	կգ	142,63
54	Ամրան փ 8 Ac-I	կգ	76,83
55	Ամրան փ 10 A500c	կգ	99,51
56	Միաձույլ Ե/Բ տապաստի կառուցում Բ25 դասի բետոնից	խմ	5,70
57	Ամրան փ 8 Ac-I	կգ	78,79
58	Ամրան փ 20 A500c	կգ	107,63

59	Ամրան փ 16 A500c	կգ	69,13
60	Միաձույլ Ե/բ սալի կառուցում հիդրոֆոբ բետոնից Բ30 W 8 դասի բետոնից	խմ	27,50
61	Ամրան փ 18 A500c	կգ	384,00
62	Ամրան փ 12 A500c	կգ	2928,10
63	Ամրան փ 8 Ac-I	կգ	41,87
64	Ամրան փ 10 A500c	կգ	1123,58
65	Հիդրոֆոբ Ե/բետոնյա սալի խարիսխային կարկասների ամրանավորում	տ	1,06
66	Ամրան փ 10 A500c	կգ	291,67
67	Ամրան փ 12 A500c	կգ	769,27
68	Անցումային սալերի հարթեցնող շերտ մանրահատիկ բետոնից Բ25 3սմ հաստությամբ	խմ	1,62
69	Անցումային սալերի ու տապաստի սոսնձային ջրամեկուսացում	քմ	48,00
70	Անցումային սալերի պաշտպանիչ շերտ ամրանավորված բետոնից Բ25 4սմ հաստությամբ	խմ	1,36
71	Ամրանային ցանց Փ4Вр-I 100*100մմ	կգ	78,00
72	Մակերեսների քսուկային ջրամեկուսացում բիտումով 2 շերտ	քմ	12,00
73	Տապաստի բլոկների տակ խճային բարձիկի իրականացում	մ3	9,00
74	Անցումային սալի տակ խճային բարձիկի իրականացում	մ3	5,40
75	Դեֆորմացիոն կարի հատվածում թռիչքային կառուցվածքի, պահարանային պատի ու անցումային սալի վրա տեղադրվող միջադիր ռուբերոիդից /3 շերտ/	քմ	17,00
76	Անցումային սալի վրա դեֆորմացիոն կարի մոնոլիտ բետոն Բ25	մ3	2,80
77	Ափային հենարանների գրունտով ծածկվող մակերեսների ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	քմ	220,00
78	Պահարանային պատի վրա հարթեցնող շերտ մանրահատիկ բետոնից Բ25 h=3-5սմ	մ3	0,20
79	Հեծանի պատրաստում և տեղադրում 18մ 12 հատ	խմ	156
80	Ամրան փ 8 A240	կգ	2033,40
81	Ամրան փ 6,5 A240	կգ	1425,24
82	Ամրան փ 12 A500c	կգ	689,76
83	Ամրան փ 10 A500c	կգ	290,16
84	Ամրան փ 32 A240	կգ	566,40

85	թիթեղ 190*80*16	կգ	45,84
86	Ե/Բ Հեծանի պատրաստում և տեղադրում 10մ 6 հատ	խմ	43,2
87	Ամրան փ 8 A240	կգ	935,88
88	Ամրան փ 6,5 A240	կգ	397,92
89	Ամրան փ 12 A500c	կգ	344,88
90	Ամրան փ 10 A500c	կգ	145,08
91	Ամրան փ 32 A240	կգ	283,50
92	թիթեղ 190*80*16	կգ	22,92
93	Ներդիր դետալների տեղադրում	կգ	914,76
94	Ամրան փ 16 A500c	կգ	133,56
95	թիթեղ 400*16	կգ	781,20
96	Ենթակոնկային ֆերմայի մոնտաժում	տ	8,73
97	խողովակ 180*140*4	կգ	4269,94
98	խողովակ 140*100*4	կգ	1740,13
99	խողովակ 100*60*4	կգ	2086,58
100	թիթեղ 6*370*400	կգ	167,28
101	թիթեղ 6150*390	կգ	16,56
102	անկյունակ 125*125*10	կգ	438,52
103	խողովակ 30*2.5	կգ	5,27
104	Ձող 30	կգ	5,04
105	Ներդիր դետալների տեղադրում ամրան 16մմ A500C	կգ	7,29
106	Ներդիր դետալների տեղադրում թիթեղ 12մմ	կգ	9,84
107	Բետոնե թումբերի կառուցում B15 դասի բետոնից	խմ	220,00

Կազմեց՝ **Կ. Վասիլյան**

ՎՂՁՈՒԿ ՑԿՈՒԵ ՂՈՒՑՂՍՈՒՈՒ

ՀՍՏԻՎՍՅՏՈՂՍԻ - ՏՁԵՈՅՈՏՅՈՒ
ՈՎՍՁԵՈՎՈՂ ՎՅՁՂՇՅՎՍՈՈՒ ՂՎՁՈՏՅՍԼՈՂՈՅՏ

«ՈՒԺ» ՈՈԼՈՒԺՂՁ

ՈՈԼ ՂՎՇՈՒՍՈ

ՅՎԵՈՂՍՏՅՈ

ԿՍՂ - ՅՈՒ - 002

Ծախսատնտեսական, տրանսպորտային կարգավորման կարգերը սահմանող 30մ թռիչքի և վնասն 100մ երկարության, ավտոմրցակալի և երկաթուղային ճանապարհների հատման կետերում, դարձակի տարածքում գտնվող (IV կատեգորիա) օդանավակայան է բարձր որակի ասֆալտբետոնե ծածկով, վերը նշված ճշգրիտ վերակառուցում, վերակազմում և ուժեղացում:

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱՐԱՐ ՊԱԼԱՏ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ Ա.ԳՈՎՈՒԼՅԱՆ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՍՈՒՏԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏՐՎՈՒԾ Է 20.11.2023
ԱՐԴՅՈՒՆՔԵՍ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՍՈՒՏԱՆ • 02565827 •

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 18032

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է « 01 ՀՈՒՆԻՍԻ 2021թ» «ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ 55/17, 272 ԲՆ.

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն)

Կ.Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ • 02565827 •

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊԼ N 18032 - 4

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԱՐՄԵՆԱԿ ԱՎԵՏԻՔԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ AS0443065

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ)

(գործունեության ոլորտը)

01. 06. 2021թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ (ստորագրություն) Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ (անուն ազգանուն)

Կ. Տ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ 02565827

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնքի Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման աշխատանքների

Ներածություն

ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, «Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծը» մշակվել է համաձայն «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ և ԿԳՄՍ նախարարության միջև կնքված առ No. ՀՀԿԳՍՄՆԳՀԾՁԲ-22/35 պայմանագրի:

Կրասար բնակավայրի կամուրջը ըստ պետական ցուցակի ինդեքս՝ 7.58.5 (համարվում է որպես հուշարձան:

Գոյություն ունեցող կամրջի նկարագրություն

Վերը նշված կամուրջը գտնվում է Կրասար գյուղից մոտ 2կմ հարավ-արևմուտք և տեղակայված է Ախուրյան գետի ձախակողմյան վտակի վրա: Այն իրենից ներկայացնում է Կրասար և Մեծ ու Փոքր Սեպասար գյուղերը միմյանց կապող ճանապարհային կառույց: Կրասարի կամուրջը ունի մոտ 7,2 մ բարձրություն, 61,5 մ երկարություն և 6,8 մ լայնություն:

Կրասարի վերակառուցվող կամուրջը կառուցվել է 1870-ական թվականներին և իր ինքնատիպ ինժեներա-ճարտարապետական հորինվածքով ու լուծումներով նման է Կարս քաղաքի կամրջին:

Կամրջի կոնստրուկտիվ համակարգը լուծված է գետահունի մեջ գտնվող երկու խելերի և առափնյա կիսախելերի վրա հենված երեք հավասարաթռիչք թաղակամարներից ու դրանց հետ համատեղ, մեկ ամբողջություն կազմող եզրային բազրիքավոր պատերից և ճանապարհապաստառից:

Պատերն ու խելերը հենված և ագուցված են ռելիեֆի թեքություններով մաքրված հիմնատակի ժայռային բնահողին, որոնք իրականացված են հիմնականում սև, մասամբ նաև դարչնակարմրագույն երանգների, կանոնավոր ձևերով մշակված, դարզատաշ երեսվածքով խոշորաչափ տուֆաքարերից, իսկ թաղակամարների եզրաշարերը սրբատաշ են:

Կամրջի ձախափնյա խուլ զանագվածը թեթևացվել է դրանում ներկառուցված ներքնասենյակով, որը նույնպես թաղածածկ է և ունի թվով մեկ մուտք ու պատուհան:

Կամրջի խելերը, թաղակամարները և պատերը շարված են կրաավազային կապակցաշաղախով, իսկ դրանց զանգվածային միջալիցքերն իրականացված են խամքարերից, տուֆախիբարներից ու կրաավազի մանրախճային կապակցաշաղախով:

Կամրջի ներկա տեխնիկական վիճակը

- Պահպանված բաց մասերում տեղի է ունեցել միջալիցքերի մակերևույթային և խորքային հողմահարման, սառնաքայքայման ու շերտապոկման երևույթներ:

Վերը նշված բնութագրություններով և «ՇԵՄՔ» ՍՊ ընկերության կողմից տրված եզրակացության տվյալներով, կամրջի վնասվածության մակարդակը դասվում է 4-րդ աստիճանի, սակայն որպես պատմամշակութային արժեք ունեցող հուշարձան-կառույց այն վերականգնվում է սույն նախագծով տրված լուծումներով:

Սույն կոնստրուկտորական մասի նախագիծը մշակվել է ճարտարապետական գծագրերի և տեղանքում կատարված չափագրումների, հետազննումների ու ինժեներաերկրաբանական զննումների տվյալների հիման վրա:

Շին.հրապարակի երկրաբանական և բնակլիմայական պայմանների նկարագրություն

ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնքի Կրասար գյուղի կամուրջը կառուցված է Ախուրյան գետի ձախակողմյան վտակի վրա:

Ուսումնասիրվող տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների պարզաբանման համար կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ելնելով տեղանքի թույլատրելի պայմաններից, փորվել է մեկ հետախուզահոր – 1,4 մ խորությամբ, կամրջի հիմնատակ ծառայող գրունտների և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման համար:
- Կատարվել են տեղամասի տեսազննումներ, հնարավոր վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթների և պրոցեսների (վարարումներ, փլուզումներ, էռուզիոն պրոցեսներ) և այլն բացահայտման համար, ինչպես նաև գրունտային պայմանների լրացուցիչ տվյալների, որի ընթացքում նկարագրվել են 4 դիտարկման կետեր (բնական մերկացումներ):

Գեոմորֆոլոգիական տեսակետից, ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Ախուրյան գետի հունային և վերհունային դարավանդների սահմաններում:

Կամրջի աջափնյա և ձախափնյա լանջահատվածները ներկայացված են ժայռային, անդեզիտա-դազիտային բազալտներով, հիմնականում ճեղքավորված, քայքայված, մեծաբեկորա-խճային կազմի, որոնք մասամբ ծածկված են փոքր հզորության լիցքային և հողաբուսական շերտերով: Ընդ որում ձախափնյա մասը համեմատած աջափնյա մասի հետ, ավելի ժայռաթեք տարածում ունի: Ինչպես ցույց են տալիս դիտարկման կետերի և փորված հետախուզահորի ուսումնասիրությունները, գետափի հունային հատվածը նույնպես ներկայացված է վերը նշված բազալտներով՝ ծածկված փոքր հզորության մոտ 0,5-1,0 մ, գետաքարա-ճալաքարային բերվածքներով:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին-պլիոցենի հրաբխային առաջացումները՝ ներկայացված բազալտներով և անդեզիտա-բազալտներով:

- Ըստ ինժեներաերկրաբանական եզրակացության բնութագրումների, կամրջի հիմքերը հիմնականում տեղադրված են թիվ 4-րդ շերտի՝ բազալտ, ճեղքավորված, քայքայված գրունտների վրա:
- Համաձայն ՀՀՇՆ 20-04- նորմերում բերված սեյսմիկ զոնավորման քարտեզի, տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ, որի համար A գործակիցը ընդունված է 0,5g,
- Հիդրոերկրաբանական տեսակետից, տեղամասի ստորգետնյա ջրերը համարվում են հունատակային տիպի ջրեր՝ կապված նշված գետի հետ: Տարածքում, որպես ջրատար շերտ համարվում են շերտ թիվ 3 ճալաքարա-կոպճային գրունտները, տեղադրված գետահունի ճեղքավորված բազալտների վրա, որոնք ևս ջրհագեցած են ճեղքավորություններում: Հարկ է նշել, որ գետի ջրի մակարդակները հարաբերական են, կախված գետի սեզոնային տատանումներից. առաջինը մեծենից – որը գետի ամառային և ձմեռային սակավաջրությունն է, իսկ մյուսը՝ գարնանային և

աշնանային վարարումներն են: Գետի մակարդակի բարձրացումները համատարած ամռան մեժենի հետ, կարող են հասնել մինչև 50-60 սմ-ի, մասամբ նույնիսկ ավելի, համաձայն տեսազննումների և հարցումների:

Համաձայն ֆոնդային նյութերի տվյալների, նշված ջրերը համարվում են ոչ ագրեսիվ ջրեր, նորմալ թափանցելիություն բետոնի նկատմամբ:

Համաձայն կատարված աշխատանքների տվյալների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների ինժեներա-երկրաբանական հետևյալ տիպերը (ГОСТ-25100-2011).

- Հողաբուսական ---------- շերտ թիվ 1
- Լիցքային (հին) ---------- շերտ թիվ 2
- Խոշորաբեկորային ---------- շերտ թիվ 3
- Ժայռային ---------- շերտ թիվ 4

Տեղամասի ստորգետնյա ջրերը, որոնք կարող են հանդես գալ առափնյա հատվածներում պատկանող գետի հունատակային ջրերի տիպին, համարվում են ոչ ճնշումային ջրեր և համաձայն ֆոնդային նյութերի տվյալների համարվում են ոչ ագրեսիվ ջրեր, ցանկացած նորմալ թափանցելիության բետոնի նկատմամբ:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները և պրոցեսները (սողանք, կարստ, սուֆոզիա և այլն) տարածքում բացակայում են, սակայն կարելի է հաշվի առնել III գլխի վերջում արված ակնարկները, չնայած գետը, Հայաստանի մյուս լեռնային գետերի նման, չունի վտանգավոր սելավային երևույթներ, էռոզիոն պրոցեսներ և ավերածություններ:

Սույն նախագծով կամրջի վերակառուցման և վերականգնման աշխատանքները կատարվում են հաշվի առնելով ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջները:

Սույն նախագծային գծագրերի մշակումները («Աշխատանքային նախագիծ» փուլ) համապատասխանում են ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտեի 11.09.2017թ-ի հ. 128-Ն հրամանի IV գլխի աղյուսակ-3-ի պահանջներին:

Հուշարձան-կամրջի վերականգնման և ամրակայման համար, հաշվի առնելով, որ այն Կրասար գյուղը կապում է Մեծ և Փոքր Սեպասար գյուղերի հետ, ուստի կամրջի հին մասը (քարե կոնստրուկցիաներով մասը) պահպանվում է որպես հուշարձան, իսկ երթևեկելի մասի կոնստրուկտիվ լուծումների համար նախատեսվում են հին կամրջի մեջ ներառել նոր՝ երթևեկելի մասի կրող տարրերը:

Հաշվարկների համար կամրջի թողունակությունը, մեքենաների քանակով ընդունվել է 200 մեքենայից պակաս ինտենսիվությամբ:

Կրասար գյուղի կամրջի կոնստրուկտիվ լուծումների նկարագրություն

Նախագծային լուծումների նկարագրություն

Կամուրջը վերականգնելու և դրանով անվտանգ ու հուսալի միջհամայնքային երթևեկություն ապահովելու համար նախագծով նախատեսվում է.

- հին կամուրջի վերակառուցում որպես հուշարձան,
- երթևկություն ապահովելու նպատակով հին կամրջի մեջ, որպես անկախ կառույց, առանց խաթարելու հուշարձան-կամրջի ճարտարապետական հորինվածքը, կառուցել նոր կամուրջ:

<u>Նոր կամրջի նկարագրություն</u>

Պատմական կամրջի ներսում, նրա ամբողջական վերականգնումից հետո նախատեսվում է իրականացնել նոր կամուրջ, որի թռիչքային կառուցվածքի աշխատանքը լինելու է անկախ կառույց՝ առանց հուշարձան-կամրջի կամարային կառույցին ազդեցությունների փախանցմանը:

Նոր կամրջի սխեման ընդունված է հեծանային, խզված, երեք թռիչքանի, որոնք միավորվում են ջարմային անխզելի շղթա: Թռիչքային կառոըցվածքը նախատեսված է երկու L=18մ, և մեկ L=10մ երկարությամբ գործարանային արտադրության նախալարված սնամեջ սալային տիպի ե/բետոնե հեծաններից: Թռիչքային կառուցվածքի լայնական կտրվածքում նախատեսված են 6 հատ հեծան:

Հավաքովի ե/բետոնե նախալարված հեծանները միմյանց հետ միավորվում են մոնոլիտացման բետոնով ըստ տիպային նախագծի և միաձույլ երկաթբետոնե սալով, որը իրականացվում է հեծանների վերին գոտիում ու միավորվում է հեծանների հետ մոնոլիտացման կարաններում տեղադրվող ամրանային կմաղկների միջոցով:

Նոր կամրջի թռիչքային կառուցվածքները հենվում են միջանկյալ հենարաններին, որոնց կոնստրուկցիան ընդունված է կանգնակային, այդ հենարանների հիմքն է ծառայում խելերի ստորին՝ հիմքային զանգվածը: <u>**Մինչև հենարանների կառուցումը այդ զանգվածը**</u>

<u>ամրակցվում է ներարկումով: Ամրացման նյութը, ներարկման ձևը և ծավալը պետք է հստակեցվի խելերի հիմքային հատվածի բացելուց և նրա ուսումնասիրությունից հետո: Միջանկյալ հենարանների իրականացված են երկու կանգնակից և պարզունակից:</u>

Ափային հենարանները իրենից ներկայացնում են արանձին ե/բետոնե զանգվածային կոնստրուկցիաներ, որոնք իրականացվում են հուշարձան-կամրջի ներսում արանձին հիմքերով, որոնց համար հիմնատակ է ծառայում տեղի բնական գրունտը: Ճանապարհի լիցքի գրունտի դեպի կամուրջ թափվելու կանխելու նպատակով կցորդման հատվածում նախատեսված է կառուցել կարգավորիչ պատեր: Պատերի կոնստրուկցիան նույնպես ընդունված է միաձույլ երկաթբետոնից:

Թռիչքային կառուցվածքը հենվում է հենարանների վրա ռետինամետահական հենարանային մասերի միջոցով:

Երթևեկելի մասի կանստրուկցիան ընդունված է բազմաշերտ և կազմված է՝

- հարթեցնող շերտից, իրականացվում է մանրահատիկ B20 դասի բետոնից,
- ջրամեկուսիչ շերտից, իրականացվում է «Տեխնոէլաստոմոստ-Ս» կամ նրան նմանատիպ բնութագրեր ունեցող նյութից
- երկշերտ մանրահատիկ խիտ ա/բետոնից (Ե-I դասի):

Կամրջի բեռնունակությունը սահմանափակվում է 20 տ ընդհանուր զանգված ունեցող 3 առանցքային բեռնատար մեքենայով, որի հետևի յուրաքանչյուր առանցքի առավելագույն քաշը սահմանվում է ոչ ավել քան է 7,5 տ, իսկ առաջային առանցքի՝ 5 տ:

<u>Հին հուշարձան կամրջի վերականգնում-ամրանավորում</u>

Ըստ նախագծային լուծումների նախատեսում ենք վերականգման-ամրակայման հետևյալ աշխատանքները.

- Հատվածաբար կազմաքանդել ու հեռացնել կամրջի թաղակամարների ու պատերի թուլացած, շերտավորված ու փքված տեղամասերը և աեանձին վնասված քարերը: Գետահունից հանել խողովակները, խելերը ամրակայող տարանջատված բետոնները՝ առանձնացնելով ու տեսակավորելով հուշարձանապատկան նյութը: Կազմաքանդել ու հեռացնել նաև պատերի և կամարների առանձին հատվածներն ամրակայող խամքարաբետոնե տեղամասերը:
- Մաքրելուց հետո գետի ջրերը ուղղորդել թռիչքներից որևէ մեկով և ջրազուրկ թռիչքներում վերականգնել խելերն ու պատերի ստորին մասերը՝ հուշարձանապատկան նյութի և նորերի համալրումով:
- Խելերի և կամարաոտերի ստորին մասերում դիտարկել տուֆաքարի առավել ջրակայուն քարատեսակներով փոխարինելու տարբերակը (բազալտ, գրանիտ և այլն):
- Խելերից ու պատերի ստորին մասերից վերև թաղակամարները, փլուզված տեղամասերը և մաքրված հատվածները վերականգնել նույն գուներանգի և որակի տուֆաքարերով:

Նմանատիպ աշխատանքներ նախատեսել նաև կամրջի մյուս թռիչքներում՝ ջրազրկելով տվյալ թռիչքը, որտեղ կատարվելու են վերակառուցման, վերականգնման աշխատանքներ:

Նշենք, որ «Նախագիծ» փուլի աշխատանքների կատարման ժամանակ հնարավոր չէր ուսումնասիրել հիմնատակերի կազմը, ուստի այդ աշխատանքները (ուսումնասիրությունները) պետք է կատարել շինարարության ընթացքում՝ խելերի հիմնային մասերը բացելուց հետո: Տվյալ աշխատանքների կատարման համար շին.հրապարակ հրավիրել ինժեներ-երկրաբանի և ինժեներ-կոնստրուկտորի, լրացուցիչ ուսումնասիրությունների հիման վրա ընդունել վերջնական լուծումներ, որտեղ պետք է նշել խելերի հիմքերի խորությունը, նիշերը, օգտագործված նյութերի տեսակը և այլ անհրաժեշտ տվյալներ:

Եթե հնարավոր չլինի բացել հիմնատակերը, ապա հնարավոր է առաջարկել այլընտրանքային լուծումներ, մասնավորապես, փոխել կամրջի կոնստրուկտիվ սխեման, կամ առաջարկել այլ կոնստրուկտիվ միջոցառումներ:

Հուշարձան-կամրջի վերականգնման և վերակառուցման աշխատանքներից զատ նրա հարակից տարածքներում նախատեսվում են բարեկարգման աշխատանքներ:

Մինչև շինարարություն սկսելը Կապալառուն Պատվիրատուին պետք է ներկայացնի Շին. կազմակերպման (նաև մասնակի քանդման աշխատանքների) նախագիծ:

Շինարարական աշխատանքների կազմակերպման ընդհանուր դրույթներ

Կամրջի շինարարությունը պետք է իրականացվի ՄՆԻՊ 3.06.04-91 նորմերի պահանջների համաձայն:

Նոր կամրջի կառուցման շինարարական աշխատանքների կազմակերպում

Նոր կամրջի կառուցումը իրականացնել գոյություն ունեցող հուշարձան-կամրջի վերականգնումից և ամրակցումից հետո: Մինչև նոր կամրջի շինարարական աշխատանքներ սկսելը, հետազոտել հին կամրջի խելերի ներսի գրունտային զանգվածը, նրա ուժեղացման համար ներարկումների իրականացնելու նպատակով:

Կամրջի կաղապարային, ամրանային և բետոնացման աշխատանքների համար պահանջվող միջանկյալ հենարանների կառուցումը իրականացնել հուշարձան-կամրջի ներսում: Արգելվում է կաղապարների ժամանակավոր ամրակցումը իրականացնել հուշարձան-կամրջի քարե շարվածքից:

Նոր իրականացվող կամրջի թռիչքային կառուցվածքի մոնտաժումը հնարավոր է իրականացնել երկու տարբերակով՝

1. Հուշարձան-կամրջին կից կառուցվում է ժամանակավոր կամուրջ կամ լիցք, որի մարմնի մեջ նախատեսված է ե/բետոնե (պողպատե) խողովակներ՝ գետի ջրերի բացթողման նպատակով: Շինարարական աշխատանքները իրականացնել գետի ջրերի ցացր մակարդակի ժամանակահատվածում: Նոր կամրջի թռիչքային կառուցվածքի գործարանային արտադրության հավաքովի նախալարված ե/բետոնե հեծանները մատակարարվում են վերոնշյալ ժամանակավոր կամրջի (լիցքի) վրա իրականացված ճանապարհով և տեղադրվում երկու կամ մեկ ամբարձիչներով, որոնց բեռնունակությունը պետք է լինի նվազագույնը 40 տ: Թռիչքային կառուցվածքի մոնտաժումից հետո կառուցված ժամանակավոր կամուրջը կամ լիցքը համապատասխան խողովակներով ապամոնտաժել և վերականգնել գետի բնական հունը և ափերը:

2. Թռիչքային կառուցվածքի գործարանային արտադրության հավաքովի նախալարված ե/բետոնե հեծանները մատակարարվում են մեկ ամբարձիչով, «ամբարձիչից առաջ» եղանակով: Հեծանները մատակարարվում են հետևից, արդեն կառուցված մոտեցման ճանապարհով կամ թռիչքային կառուցվածքով: Եթե կիրառվում է այս եղանակը, Կապալառուն պետք է կատարի ստուգիչ հաշվարկներ՝ մոնտաժված թռիչքային կառուցվածքի ամրության ու ճաքակայունության ապահովման վերաբերյալ:

Երթևեկելի մասի սալի բարձակների բետոնացման համար պետք է կիրառել կախովի, ոչ ապամոնտաժվող կաղապարներ:

Նոր կամրջի երթևեկելի մասի ա/բետոնե ծածկույթի իրականացման ժամանակ **խստիվ արգելվում** է կիրառել գլդոնների ու ասֆալտ-տեղադրող մեքենայի թրթռացման սարքավորումներ:

Շինարարական աշխատանքների անվտանգության ապահովում

Շինարարական բոլոր աշխատանքները հարկավոր է կատարել ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» շինարարական նորմերի պահանջների համաձայն:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն Կապալառուի համապատասխան բաժնի կողմից մշակված շին.աշխատանքների կազմակերպման նախագծի հիման վրա՝ հաստատված տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Կամրջի շինարարական աշխատանքները գիշերային հերթափոխում իրականացնելիս Կապալառուն պետք է ապահովի շին.հրապարակի և հարակից տարածքի, որտեղ կատարվելու են շինարարությանը անհրաժեշտ աշխատանքներ, համապատասխան լուսավորությունը:

Ամբարձիչների աշխատանքը պետք է սահմանափակված լինի անվտանգության նախազգուշացնող նշաններով համաձայն ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» շին.նորմերի պահանջների:

Բնապահպանական պահանջներ

Բոլոր աշխատանքները պետք է իրականացվեն բնապահպանական պահանջների ապահովմամբ:

Նախագծման ընթացքում օգտագործված գրականություն

1. ՄՆԻՊ 2.05.03-84* “Կամուրջներ և խողովակներ:
2. ՀՀՇՆ 20.04-2020: Երկրաշարժադիմացկուն շինարարություն: Նախագծման նորմեր:
3. ՀՀՇՆ IV 10.01.01-2006, Շենքերի և կառուցվածքների հիմնատակեր:
4. Типовой проект. Серия 3 3.503.1-108. Пролетные строения из пустотных плит длиной от 12 до 18 м, армированные стержневой арматурой, для мостов и путепроводов на автомобильных дорогах.

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄ	ԷՋ
1	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԿԼ-1
2	ԿԱՄՐՋԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԿԼ-2
3	Խելերի ամրացման մոնտաժային սխեմա	ԿԼ-3
4	Միաձույլ ե/բետոնե սյուների և հեծանների մոնտաժային սխեմա	ԿԼ-4
5	Հավաքովի սալային հեծանների մոնտաժային սխեմա	ԿԼ-5
6	Կտրվածք 1-1/ափային հենարանների եվ խելերի ամրանավորում/	ԿԼ-6
7	Կտրվածք 2-2, պատերի ամրացում, որմնամույթեր	ԿԼ-7
8	Կտրվածք 3-3	ԿԼ-8
9	ՄԱՄՆԱԳԻՐ	ԿԼ-9
10	ՊԱՏԻ ԴՐՎԱԳ, ՏԵՍՔ Ա-Ա °	ԿԼ-10
11	ՖԵՐՄԱ Ֆ-1, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ, ՄԱՄՆԱԳԻՐ	ԿԼ-11
12	ՀԵՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՐԶՈՒՆԱԿ ԿՏՐՎԱԾՔ 1-1,2-2,3-3 ՄԱՄՆԱԳԻՐ	ԿԼ-12
13	Անուրների էսքիզներ	ԿԼ-13
14	L=18մ հեծանների հենարանային մասեր:	ԿԼ-14
15	Հենարանային սյուն, կտրվածք 1-1,2-2	ԿԼ-15
16	Անուրների էսքիզներ, մասնագիր	ԿԼ-16
17	Ափամերձ հենարանի երկրաչափական տվյալներ	ԿԼ-17
18	Ափային հենարանի հիմքի ամրանավորման սխեմա: 1:50	ԿԼ-18
19	Ափային հենարանի ուղահայած պատերի իրանի ամրանավորման սխեմա հատակագծում:	ԿԼ-19
20	Անցումային սալի կոնստրուկցիան	ԿԼ-20
21	Տապաստի կոնստրուկցիան	ԿԼ-21
22	Կցորդման հանգույցներ	ԿԼ-22
23	Երթևեկելի մասի հիդրոֆոբ ե/բետոնյա սալի ամրանավորման սխեմա	ԿԼ-23
1	2	3

1	2	3
24	Թռիչքային կառուցվածքի 18մ հեծանների հատվածում կարկասներ k-1, k-2, k-3 տեղադրման սխեմա և կոնստրուկցիա	ԿԼ-24
25	Թռիչքային կառուցվածքի 10մ հեծանների հատվածում կարկասներ k-1, k-2, k-3 տեղադրման սխեմա և կոնստրուկցիա	ԿԼ-25
26	L=18մ B1 հեծանի երկրաչափական տվյալներ	ԿԼ-26
27	Թռիչքային կառուցվածքի հեծան l=10մ, ցանցեր CP-1,2	ԿԼ-27
28	Կտրվածք 1-1,2-2 Ցանցեր CP-3, CP-3	ԿԼ-28
29	Ցանցեր CP-11,12,13,14	ԿԼ-29
30	18 մետրանոց հեծանի ոչ նախալարված ամրանի մասնագիր , ցանց C8	ԿԼ-30
31	L=10մ B1 հեծանի երկրաչափական տվյալներ	ԿԼ-31
32	Թռիչքային կառուցվածքի հեծան l=18մ, ցանցեր CP-1,2	ԿԼ-32
33	Հեծան l=10մ: Ցանցեր CP-11,12,13,14:	ԿԼ-33
34	10 մետրանոց հեծանի ոչ նախալարված ամրանի մասնագիր , ցանց C8	ԿԼ-34
35	L=18մ հեծանի նախալարման սխեմա , մասնագրեր	ԿԼ-35
36	L=10մ հեծանների նախալարման սխեմա , մասնագրեր	ԿԼ-36
37	Ենթակոռնկային ֆերմաների համար ներդիր դետալների դասավորության սխեմա	ԿԼ-37
38	Կամրջի վերականգման համակավարամածի սխեմա մ1:100	ԿԼ-38
39	Ենթակոռնկային ֆերմա Ֆ-2	ԿԼ-39
40	Կտրվածք 1-1; կտրվածք 2-2	ԿԼ-40
41	Կազմովի էլեմենտներ , կտրվածքներ	ԿԼ-41
42	Մասնագիր	ԿԼ-42
43	Շին. կազմակերպման գլխավոր հատակագիծ	ՇԿ-1
44	Կամրջի վերականգման համար կավարամածի եվ կռունկի տեղակայման սխեմա	ՇԿ-2
45	Մուտքային հանգույց	ՇԿ-3
46	ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ	ՇԿ-4
47	Պահանջվող մեքենա-մեխանիզմ	ՇԿ-5
48	Պահանջվող մեքենա-մեխանիզմ, Անվադողերի լվացման կետ, Ամրանների տեսակները	ՇԿ-6
49	Ժամանակացույց	ՇԿ-7

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Կլ-1	49	№ՀՀԿԳՄՄՆԳՀՇՇԶԲ-22/35
Կոնստր.	Գ. Պարոնյան		Կոնստրուկտորական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ			ԿԱԴ-ԲՍԱ-002
Կոնստր.	Հ. Բաբայան		ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	«ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ՔՊԼ 18032

ԿԱՄՐՋԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:100



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կամրջի երթևեկությունը կազմակերպել միակողմանի և հանդիպակաց ուղղություններում տեղադրել երթևեկությունը կարգավորող նշաններ

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կուսաար գնակավայրի 19-րդ դաշտի կամրջի վերակառուցման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Կլ-2	49	№22ԳՄՄՆ-ԳՀՇՀԲ-22/35
Գլխավոր.	Գ. Դարոնյան		Գլխավոր ճարտարապետ	«ՎԱՍԱՏ» ՍՊԸ			ԿԱԴ-ԲՅԱ-002
Գլխավոր.	Հ. Բաբայան		ԿԱՄՐՋԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ	«ԴԱՅԻ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ք.Գյումրի 2022թ

ԽԵԼԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ Մ1:100



Տնօրեն	Գ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ.Աշոցք համայնք.Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Գլ-3	49	№-22ԳՄՄԱ-ԳՀՀԲ-22/35
Գլխավոր.	Գ. Պարոնյան		Կոնստրուկտորական	«ՎԱՍԱՏ» ՍՊԸ			ԿԱԳ-ԲՅԱ-002
Գլխավոր.	Հ. Բաբայան		Խելերի ամրացման մոնտաժային սխեմա	«ՀՑՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ք/Ա. 18032

ՍՅՈՒՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԶՈՒՆԱԿՆԵՐԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ Մ1:100



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Ե/բետոնե կոնստրուկցիաների չափերը ճշտել շինարարության ընթացքում,
2. Ե/բետոնե հենապատերի համար օգտագործել B25 դասի ծանր լցանյութերով բետոն, որի ծավալը կազմում է 13,0 խմ,
3. Ե/բետոնե հենապատերի համար օգտագործել՝ աշխատանքային ամրան Ø16A500c դասի ամրաններ՝ 1890,0կգ, բաշխիչ ամրան Ø10A500c,
4. Ե/բետոնե հենապատերի հետևամասի գրունտին հարող մասերում նախատեսել ջրամեկուսացում :

Տնօրեն	Գ. Հասիյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի	գլխավոր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Գլ-4	49	№22ԳՄՄԼԱՀՇՇԳՊ-22/35
Գլխավոր.	Գ. Պարոնյան		Գլխավորագրական	«ՎԱՍԱՏ» ՍՊԸ			ԳԼԽ-ԲՍԱ-002
Գլխավոր.	Հ. Բաբայան		Միաձույլ երբետոնե պոմերի և հենքանների մոնտաժային գծանկար	«ՌՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ք/գլ. 18032

ՀԱՎԱՔՈՎԻ ՍԱԼԱՅԻՆ ՀԵԾԱՆՆԵՐԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱ Մ1:100



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Ափային հենարան-2-ը համանման է հենարան-1-ի հայելային տարբերակին ,
2. Հատակագծում որմնանեցուկների չափերը պայմանական ցույց տրված չեն, որոց մանրամասները տես թերթ Կլ-7 :

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար գնակավայրի 19-րդ դաշտի կամրջի վերակառուցման նախագիծ	փուլ	թերթ	թերթերի	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Կլ-5	49	№-22/գ4ՄՄՆ-ԳՇՇՖ-22/35
Գլխավոր.	Գ. Դարոնյան		Գլխավոր ինժեներական	«ՎԱՍՍԱՏ» ՍՊԸ			ԿԼՄ-ԲԻԼ-002
Գլխավոր.	Հ. Բաբայան		Հավաքովի սալային հենասների մոնտաժային սխեմա	«ԼԱՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ք/թլ. 18032


ԿԱՌՈՒՑՔԻ ԳԾԱՊԱՏԿԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ /ԿՍՀ-ԿՈՇՈՒ ՀԻԴՐՈՍԱՀՈՒՅՑ/
1:50
0.000=1980.2
43355
2950
1000
3000
1000
1000
1

ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ /ԿՏՐՎԱԾՔ 2-2/, Մ1:50



ԿՏՐՎԱԾՔ 3-3 Մ1:50



Խելերի ներսից հողից ազատելուց հետո պետք է կատարվի գոյություն ունեցող կառնստրուկցիայի մանրամասն զննում և նրա արդյունքների հիման վրա ճշգրտվի նոր հենարանի հիմքի ամրացումը և գոյություն ունեցող հիմքում նարարկման նյութը և տեխնոլոգիան

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Կլ-7	49	№ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-22/35
Կոնստր.	Գ. Ղարոնյան		Կոնստրուկտորական	«ՎԱՄԱՐՏ» ՍՊԸ			ԿԱԴ-ԲՊԱ-002
Կոնստր.	Հ. Բաբայան		Կտրվածք 2-2, պատերի ամրացում, որմնամույթեր	«ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ՔՊԼ 18032

ՀԱՆԳՈՒՅՑ 1 Մ1:20

ԿՏՐՎԱԾՔ 3-3 Մ1:50





ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Խելի հիմնատակերի գրունտներում նախատեսել ամրացումներ, որոնց տեսակը որոշել հիմնատակերը բացելուց հետո:
2. Երթևեկելի մասի ե/բետոնե սալի մակերեսի որակը պետք է համապատասխանի կամուրջների համար նախատեսված սոսնձային ջրամեկուսիչ շերտի կպցման համար: Անհրաժեշտություն դեպքում իրականացնել հարթեցնող ծերտ մանրահատիկ բետոնից (բետոնի դասը B20, W6, հաստությունը 2-3 սմ):

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Կլ-8	49	№ՀՀԿԳՄՄՆԳՀԾՀԲ-22/35
Կոնստր.	Գ. Պարոնյան		Կոնստրուկտորական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ			ԿԱԴ-ԲԱԱ-002
Կոնստր.	Հ. Բաբայան		Կտրվածք 3-3 Մ1:50	«ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ՔՊԼ 18032

ՊՈՂՊԱՏԻ ՄԱՍՆԱԳԻՐ ՄԵԿ ԷԼԵՄԵՆՏԻ ՀԱՄԱՐ

ԴԻՐՔ N	ԱՆՎԱՆՈՒՄ		ՔԱՆ. Հատ	ՔԱՇԸ կգ	ԸՆԴԱՄ. կգ
	ԽԵԼԻ ԱՄՐԱՑՈՒՄ/2 ՀԱՏ/				
21	Ø12 A500c	L=1070	174	0.95	165
22	Ø16 A500c	L=800	174	1.26	219
23	Ø12 A500c	L=1020	174	0.91	158
24	Ø16 A500c	L=167100	1	264	264
25	Ø16 A500c	L=1800	340	2.84	966
25`	Ø12 A500c	L=925500	1	822	822
26	Ø8 Ac-I	L=250	280	0.10	28.0
27	Ø12 A500c	L=650	130	0.58	75.4
28	Ø12 A500c	L=900	348	0.80	278
29	Ø8 Ac-I	L=500	86	0.20	17.2
30	Ø8 Ac-I	L=410	86	0.16	13.8
	ԲԵՏՈՆ B25 V=24.5Մ^3				
	Ե/ԲԵՏՈՆԵ ԹԱՂԵՐ /1 ՀԱՏ/				
31	Ø12 A500c	L=7460	150	6.62	993
32	Ø12 A500c	L=7250	150	6.44	966
33	Ø12 A500c	L=7400	600	6.57	3942
34	Ø8 Ac-I	L=180	164	0.07	11.5
	ԲԵՏՈՆ B25 V=25.0Մ^3				
	Ե/ԲԵՏՈՆԵ ՊԱՏԵՐ /1 ՀԱՏ/				
38	Ø12 A500c	L=9120000	1	8098	8098
37	Ø8 Ac-I	L=180	700	0.07	49.0
36	Ø12 A500c	L=1480	300	1.31	393
	ԲԵՏՈՆ B25 V=45.0Մ^3				
	Ե/ԲԵՏՈՆԵ ՈՐՄՆԱՆԵՑՈՒԿ /8ՀԱՏ/				
38	Ø12 A500c	L=85000	1	76	76
37	Ø8 Ac-I	L=180	8	0.07	49.0
	ԲԵՏՈՆ B25 V=0.5Մ^3				

ԴԵՏԱԼՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ԴԻՐՔ	ԷՍՔԻԶ	
23	200 / 200 / 620	
21 / 24	300 / 520 / 250	50 / 150 / 50
27 / 29	100 / 550	50 / 400 / 50
30 / 31	30 / 310 / 30	
32 / 38		950 / 50 / 50
36	520 / 60 / 400 / 500	

Տնօրեն	Կ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր	պատվեր
Տնօրեն	Ա. Դանիելյան			Ն	Կլ-9	49	№ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-22/35
Կոնստր.	Գ. Պարոնյան		Կոնստրուկտորական	«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ			ԿԱԴ-ԲԱԱ-002
Կոնստր.	Հ. Բաբայան		ՄԱՍՆԱԳԻՐ	«ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ			ՔՊԼ 18032

ՊԱՏԻ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԻ ԴՐՎԱԳ /ՀԱՏԱԿԱԳԻԾ/ Մ1:40



Տեսք Ա-Ա, Մ1:40



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. ՍՈՒՅՆ ԹԵՐԹԸ ԴԻՏԵԼ ԿԼ-3, ԿԼ-4 ԹԵՐԹԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

Տնօրեն	Գ. Վասիլյան		ՀՀ Շիրակի մարզ,Աշոցք համայնք,Կրասար բնակավայրի 19-րդ դարի կամրջի վերականգնման նախագիծ	փուլ	թերթ	թերթեր	պատվեր
